ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

ՀԱՅԱԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Քրիստոնեությունը Հայաստանի մեջ տարածվելն վերջը զարմանալի երևույթի մը առջև կգտնվինք։

Հայ Եկեղեցին, իր սեփական դավանությամբ, իր ինքնահատուկ վարչական կազմակերպությամբ, իր ծեսերով ու արարողություններով, իր մասնավոր պաշտամունքով, քրիստոնյա եկեղեցիներու շարքին մեջ ունի իր մասնավոր տեղը և կենդանի գերազանցապես ազգային հանգամանքով եկեղեցի մը։

Հայ Եկեղեցին պատմության ուսումը մեզի կհասցնե սա պարզ և հստակ եզրակացության թե հայերը կանուխ ընդունելով քրիստոնեությունը՝ մաս կազմած են նախ տիեզերական կամ Ընդհանրական Եկեղեցին, բայց հետո տեսնելով այս միջազգայնությամբ (եթե ներելի է այս բառը գործածել այս պարագային) ազգին սպառնացող վտանգը, մնալով հանդերձ թունդ հավատացյալ քրիստոնյաներ, քրիստոնեական կրոնքը ազգայնացուցած կամ հայացուցած են, և Դ դարեն սկսյալ հետզհետե ավելի ազգային հանդամանք տված և կերտած են Հայ ազգային Եկեղեցին։

Ժողովրդավար ոգիով ու ժողովուրդին հետ նույնացած Հայ Եկեղեցին, իր ազգային դրոշմը կստանար Ե դարեն հետո, մասնավորապես Զ դարուն, երբ հայերը մնալով հանդերձ քրիստոնյա և բարեկամ բոլոր քրիստոնյա աշխարհին, բոլորովին առանձնահատուկ նկարագիր մը տվին իրենց եկեղեցիին, և իրարու հաջորդող քայլերով Ընդհանրական եկեղեցիին միության մեջ՝ ազգին սպառնացող վտանգին դիմադրավեցին։

Այսպես, Հայ Եկեղեցին նախ մերժեց Կեսարիո կամ Անտիոքի աթոռներուն Հայաստանի վրա հովուապետական իրավունքներ ունենալու հավակնությունը, հետո հայ գիրեր ստեղծեց հայ ժողովրդին տալու համար իր հավատքին հիմը եղող Աստուածաշունչը՝ հայերեն, ինչպես նաև հայ լեզվով կատարելու համար հայ եկեղեցիներու մեջ պաշտամունքը, և վերջապես հնավանդ հավատքը ամուր պահեց և նորանոր դավանանքներ և վարդապետություններ բացարձակ մերժեց։ Մասնավորապես Քաղքեդոնի ժողովին մերժումը այն մեծ քայլը եղավ, որ Հայ Եկեղեցին անկախ դարձուց Ընդհանրական եկեղեցիեն, որը, ինչպես Փոքր Ասիո մեջ ապազգայնացուցած և քրիստոնեական ընդհանուր եղբայրության մեջ ձուլած էր բազմաթիվ և այլազան ժողովուրդներ, որոնք երբեմն կկոչվին կապադովկիացի, պոնտացի, պափլագոնիացի, փյուտիկեցի, բյութանացի և այլ անուններով, կսպառնար հայերը նույնպես ձուլել բյուզանդականության մեջ։

Այսպես կազմակերպվեցավ և կերտվեցավ այն սքանչելի հորինվածքը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որը է դարեն հետո ամենամեծ նեցուկը և հենարանը պիտի ըլլար հայ ազգին։

Օրմանյան Հայ Եկեղեցին արդարացիորեն կկոչե «Հայադավանք», վասնզի անիկա հայ ազգության հետ ձուլված և միավորված է, և հայերը միշտ իրենց կրոնքը որակած են իրավամբ «Հայ Քրիստոնեություն», որ իսկապես ճիշտ բացատրություն մըն է։ Այո «Հայ

քրիստոնեությունն» էր, որ Ե դարեն սկսյալ, իր ինքնագլուխ և անկախ գոյությունը ապահովելե հետո, կենտրոնաձիգ զորություն մը եղավ ազգին մեջ և հիանալի դեր մը կատարեց, վանողի ներքին քաղաքական աշխատությամբ հայացուց Հայաստանի կես-հայացած նահանգները, և նույնիսկ Հայաստանի սահմաններեն դուրս թափանցեց և հաջողեցավ Հայադավան դարձնել վրացի հայախոս ու նույնիսկ ոչ հայախոս շրջանները, և այսպես հայադավանության կամ հայ քրիստոնյա աշխարհին սահմանները ընդարձակեց։

Հայաստան, ինչպես ծանոթ է, քրիստոնյա քարոզիչներ ընդունած է նույնիսկ մեր թվականին առաջին տարիներուն։ Պատմական որոշ տվյալներ ունինք, ազգային և օտար պատմիչներն ավանդված, որոնք կհաստատեն՝ թե նախ քան Գրիգոր Լուսավորիչ Հայաստանի մեջ կային քրիստոնյա հայեր, որոնք ունեին նույնիսկ իրենց հատուկ հովիվները կամ եպիսկոպոսները, և հարաբերության մեջ էին Ընդհանրական Եկեղեցիին հետ։ Գրիգոր Լուսավորիչ, Կապադովկյան եկեղեցիեն ղրկված դեպի Հայաստան, իր գործակիցներով հաջողեցավ հայերը զանգվածային կերպով քրիստոնյա դարձնել 279-ին*)։

Իրեն համար մեծ հաղթանակ մըն էր հայ արքունիքն քրիստոնյա ընելը, և նախարարական տուները նոր կրոնքին հնազանդեցնելը։ Ավագանիին և արքունիքին ժողովուրդն ալ հետևեցավ, առանց շատ թափանցելու նոր կրոնքին հոգվույն, ինչպես որոշ կերպով կհիշատակե Փավստոս մոտավորապես հարյուր տարի հետո, դառնապես գանգատելով, որ հայերը տակավին կպահեին իրենց հեթանոսական սովորությունները, կենցաղը և բարքերը (ՓԱՎՍՏՈՍ Գ. ԺԳ)։

Ագաթանգեղոս (էջ 627—8) թեև այնպես մը կներկայացնե թե Գրիգոր Լուսավորիչ քարոզած և քրիստոնյա ըրած է «Ընդ ամենայն երկիրն Հայոց ի ծագաց մինչև ի ծագս ...ի Սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց. մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասփից. ի Փայտակարան քաղաք արքայութեան Հայոց և յԱմատացւոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, ընդ եզր առ սահմանօքն Ասորւոց, առ Նոր Շիրական երկրաւն և առ Կորդուօք մինչև յամուր երկիրն Մարաց, մինչև առ տունն Մահքռտան իշխանին, մինչև յԱտրպատական ձգէր տարածանէր զաւետարանութիւնն իւր», սակայն հավանական չէ բնավ, որ անիկա բոլոր այս հիշածները իսկապես քրիստոնյա դարձնել հաջողած ըլլա։

Գր. Լուսավորիչ և իր հետևորդները մասնավորապես իրենց բոլոր ուժը թափեցին Հայաստանի քաղաքական կեդրոնները գրավելու ու մեհյաններուն ծառայող քուրմերը քրիստոնյա դարձնելու։

Արդ որոշ է, թե Հայաստանի ուժը գլխավոր մեհյանները կգտնվեին առավելապես Արաքսի և Եփրատի հովիտներուն մեջ, որով առաջին անգամ քրիստոնեացած շրջաններն եղան Այրարատ, Տարոնը, Եկեղյաց գավառը, և մանավանդ Ծոփքը (հետո Դ. Հայք կոչված նահանգը), որ իբր Կապադովկիո դրացի երկրամաս մը թերևս ավելի կանուխ քրիստոնյա եղած էր։

Այնպես որ Դ դարուն բոլոր երկիրը կատարելապես քրիստոնեացած չէր, և Հայաստանի զանազան մասերուն մեջ տակավին կապրեր հեթանոսությունը։

Այս մասին Փավստոս Բուզանդացիեն զատ, որ դժգոհ էր երկրին մեջ պահված հեթանոսական սովորություններու և բարքերու համար, Ե դարուն սկիզբեն ունինք ուրիշ փաստ մը, անժխտելի կերպով վավերական. որ ժամանակակից մատենագիր մը՝ Կորյուն կընծայե մեզի։ Իր վարդապետին՝ Մաշտոցի կենսագրության մեջ Կորյուն կպատմե, թե ինչպես Սահակ Պարթև և Մաշտոց-Մեսրոպ կհամաձայնին «ուրպէսզի Տէր եպիսկոպոսն (իմա՛ Սահակ) ի կայենականսն, և նա (իմա՛ (Մաշտոց) ի սփիւռս հեթանոսաց. զբանն կենաց սերմանեսցին» (Վարք Մաշթոցի, 1930, Երուսաղեմ, էջ 26)։

Այս խոսքերեն որոշ է թե Մաշտոց պիտի քարոզեր հեթանոսներու, այսինքն ոչ քրիստոնյաներու։ Դյուր նկատելի է, որ այս հեթանոս վայրերուն առաջինը կնշանակվի Գողթան գավառը (երբեմն Վասպուրականի և երբեմն Սյունյաց նահանգին կցված), ուր «ընտելական սովորութեամբ ի կիրարկեալ զվարդապետութիւնն... լի առնէր զգաւառն ողջունիւ Աւետարանին Քրիստոսի և կարգէր

---

*) Ըստ Ս. Մալխասյանի (տես «Էջմիածին» ամսաթերթ 1944 թ., թիվ 1, էջ 22—26)։ Հ. Ներսես Ակինյան ավելի կանուխ՝ 220-ին կդնե Լուսավորչի քարոզությունը և Հայոց քրիստոնեության ընդունումը (տես «Արև» 1945 թ. հունիս 3, թ. 8068), միայն թե իր փաստերը կկարոտին ավելի հիմնավորվելու ու մշակության. իր ներկայացուցած ձևին մեջ կմնան շատ տարակուսելի կետեր։

յամենայն գիւղս գաւառին դասս սրբոց վանականաց...» *(Նոյն տեղ, էջ 29)*։

Ուրեմն Սյունյաց և Վասպուրականի միջնասահման տեղ մը և հոծ հայության կեդրոն մը տակավին Ե դարուն կմնար հեթանոս, գոնե մասամբ, և Մաշտոց կերթար հոն քարոզելու երկրորդ անգամ, վասնզի նախապես ալ հոն «յանկարգ և յանդարման տեղին Գողթան» *գացած էր երբեմն* «սատարութեամբ իշխանին, գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն ի հնազանդութիւն Քրիստոսի» *մատուցած էր (Կորյուն, էջ 15)*։

Գողթան գավառին այս երկրորդ այցելութենեն հետո է, որ «ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն նկանէր, և անդ աստուածատուր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղինակ անուն, բազում օգնականութիւն գտեալ ի նմանէ վասն իւրացն առաջի արկելոց, մինչև հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանացն Սիւնեաց: Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւր վարդապետութեան, առաւել զգազանամիտ զվայրենագոյն՝ զճիւաղաբարոյ կողմանցն, և այնչափ փոյթ ի վերայ ունելով և դայեկաբար սնուցանել և խրատել մինչև ի նոցունց իսկ ի վայելենեացն եպիսկոպոս՝ տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անուն կոչէր Անանիաս, այր սուրբ և երանելի՝ հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ. ապա և զերկիրն Սիւնեաց վանականօք լնոյր»: *(Նոյն, էջ 29—30)*։

Ասկե բացորոշ կհասկցվի թե Սյունյաց նահանգը ևս մինչև այդ թվականները կմնար տակավին հեթանոս, գեթ մասամբ, և Մաշտոց կքարոզեր ու կկազմակերպեր։

Մաշտոց նաև Վրաստանի մեջ կգործե և «զաղտ և զժանգ չարաւահոտ դիւացն ի զնոտիագործ պաշտամանէն իւրաց բերեալ. այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց և այն յիշատակ ցուցանել մինչև ասել թէ «Մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ»: *(Նոյն, էջ 31—32)*։

Այս տողերն ալ ցույց կուտան թե վրացիք տակավին Ե դարուն, թեև Գր. Լուսավորիչե քրիստոնյա դարձած, կպահեին հեթանոսությունը կամ մակերևույթաբար միայն քրիստոնեացած էին։

Մաշտոց, ինչպես կպատմե Կորյուն, ամենեն վերջը այցելած է Աղվանից աշխարհը, որը թեև քրիստոնյա եղած, սակայն Կորյունեն «վայրենամիտ և դաղարկասուն և անասնաբարոյ» *կորակվի (Նոյն, էջ 43) և իրենց գիրերու գյուտեն հետո է, որ* «մարգարէազէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւրք անտեղեակք» *(Նոյն, էջ 43)։ Հետո Մաշտոց կայցելե* «ի Բաղասական կոչմանս», *որոնք արդեն քրիստոնյա էին և եպիսկոպոս (Մուշեղ) մըն ալ ունեին, սակայն անոնց հավատքն ալ կամրապնդե։*

Այս վայրը ոմանք կկարծեն թե ըլլա Ուտի նահանգը Հայոց, դրացի Աղվանից երկրին)։*

Վրացիք և աղվանք դուրս կմնային Հայաստանեն, սակայն, ինչպես տեսնվեցավ, Գողթան գավառը և Սյունյաց նահանգը ևս հեթանոս էին, ինչպես հարավի մեջ Մարաց կողմերը «որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին դժուարամատոյցք էին, առ ի յարդարել և զնոսա ճարանց ամացն ծնունդս, առեալ պարզախօս ճոխտորաբանս, կրթեալս աստուածատուր իմաստութեանս ծանօթս կացուցանէին»: *(Նոյն, էջ 23)*։

Անշուշտ կային ուրիշ ծայրագավառներ ալ, որոնք պետք եղածին պես քրիստոնյա չէին։

*Սակայն, ինչպես կթվի, Հայ գիրերու գյուտեն, այսինքն 404-են մինչև 451 թվականը սահող, հազիվ կես դարու ժամանակամիջոցին, Հայ Եկեղեցին զորացած հայախոս Ս. Գիրքերով, եռանդուն քարոզչությամբ մը հաջողած է բոլոր Հայաստանը և դրացի մի քանի ժողովուրդները, ինչպես աղվանները, վրացիները, և այլ կովկասյան ազգերը**) այնքան եռանդուն քրիստոնյաներ դարձնել, որ անոնք 451-ին ամենքը միասին իբր մեկ ճակատ Հազկերտի դեմ կանգնեցան և հանձն առին իրենց կրոնքին համար նահատակվիլ։*

Եթե առձեռն ունենայինք Հայ Եկեղեցին թեմական կազմակերպության պատմությունը լուսաբանող փաստեր, թերևս կարելի ըլլար ճշտել թե քրիստոնեությունը Հայաս-

---

**) Դանիել Ֆնդգլյան (Կորյուն, էջ 44) կենթադրե թե ան Աղվանից երկրին ծայրը՝ դեպի արևելյան հյուսիս դրացի Բաղասականներու երկիրն է, դրացի Մազքթաց, Ալանաց և Հոնաց։ Բաղասական անունին մասին տես նաև Մակար եպիսկ. Բարխուդարեանց— Պատմութիւն Աղվանից, էջ 23—25։*

***) Հայերը և կովկասյան ժողովուրդներու մեջ քրիստոնեությունը տարածելու համար կատարած ջանքերը ամբողջական կերպով պատկերացուցած է Գեորգ Մեսրոպ (տես Հայրենիք ամսաթերթ, Ի տարի, թիվ 1 և ԺԲ տարի, թիվ 9 և 11, և Հայկարան, Սոֆիա 1931, էջ 201—215)։*

տանի որ նահանգներուն մէջ ավելի կանուխ ամրապնդված է։

Դժբախտաբար շատ քիչ են այս մասին մեր ունեցած ծանոթությունները, և հաճախ ավանդություններ են, որոնք վավերական չեն։

Եթե հավատ ընծայել կարելի է Ագաթանգեղոսի, Լուսավորչի ձեռնադրած էր 12 եպիսկոպոսներ, որոնք եթե իսկապես թեմակալներ ըլլային Հայ Եկեղեցիին, ան իր սկզբնավորության ժամանակամիջոցին իսկ պիտի ունեցած ըլլար 12 թեմակալություն։ Սակայն Հ. Մարկուարտ (տես Հայկական թեմերու սկզբնավորությունը, Հ. Ա. 1934, էջ 112—124), հակառակ հայ պատմագիրներու ջանքերուն, որպեսզի եպիսկոպոսական թեմերու մեծ թիվ մը ներկայացվին, կկարծե թե հայ եպիսկոպոսներու թիվը շատ սահմանափակ էր Լուսավորիչի և անոր անմիջական հաջորդներուն ատեն։

«Հայ եկեղեցւոյ հիմնարկութեան ժամանակ նախնաբար Գործ Առաքելոցի օրինակին վրայ եօր Սարկաւագ, վերակացու Ի. եպիսկոպոս դրուեցաւ ազգատներու խնամքին և տնտեսութեան համար։ Վերջէն երբ անոնք կանոնական իմաստով «եպիսկոպոս» անուանուեցան, անոնց թիւը նախ տասի, յետոյ տասներկուքի բարձրացուցին։ Ներսէսի ժամանակ, երբ անոնց նշանակութիւնը մեծցած էր, առաքելներն յիշել ուզելով, անոնց թիւը 12-ի բարձրացուցին»։ (Հ. Ա. 1934, էջ 124)։

Հ. Մարկուարտ իր հետազոտության իբր՝ եզրակացություն կրսե թե «Լուսաւորիչի ժամանակ Հայաստանի մէջ կային երեք եպիսկոպոս միայն։ Ինքը՝ Գրիգոր Լուսաւորիչ, իւր որդին ու աշխատակիցը՝ Արիստակէս, և իւր ընդհանուր փոխանորդը՝ Դանիէլ քորեպիսկոպոս Տարօնոյ» (Die Entstehung, էջ 187)։

Մոփք, որ այն ժամանակ Հռոմեական կայսրության հող էր*) հարավային Հայաստանի մեջ, իբր առաքյալ եպիսկոպոս (քորեպիսկոպոս) ուներ Արիստակեսը։ (Նույն, էջ 199)։ Ուրեմն Լուսավորիչի ժամանակները ավելի շրջուն եպիսկոպոսներ կային քան հաստատուն թեմակալներ։ Ասոնք կգործեին Հայաստանի մեջ, ծայրագավառները և սահմանները դուրս։ Այդպես էին Դանիել քորեպիսկոպոսը*), որ մինչև Պարսկաստան գացած էր, Մանուկն Գրիգորիս, որ մինչև Հյուսիսային Կովկաս տարածած էր իր քարոզչական շրջանակը և թերևս նաև Արիստակես, որ Մոփցց և թերևս հարավային սահմանակից երկիրներու մեջ գործած էր (հմտտ. Հ. Մարկուարտ Հ. Ա. 1934, էջ 124)։

Ավելի ուշ Հայաստանյայց Եկեղեցին ունեցած պետք է ըլլա իր թեմական կազմակերպությունը, որ հետզհետե կանոնավորուած է, սակայն, ինչպես դիտել տվի, դժբախտաբար վավերական տվյալներ չունինք անոր զարգացումը ցույց տվող։ Մանավորապես նախ քան Ե դար մեր ունեցած ծանոթությունները խիստ սահմանափակ են։

Ինչպես տեսնվեցավ Մարկուարտ կկարծե թե Լուսավորիչեն մինչև Մեծն Ներսես խիստ սահմանափակ էր հայ եպիսկոպոսական թեմերու թիվը։

Այս ժամանակամիջոցին միայն Վրթանեսյ ժամանակ (315—330) կհիշվի թե Հայրապետանոցի վերակացու Եպիսկոպոսներեն երկուքը՝ արքիտիական Ագբիանոս և Եմատղիոս, Մանավազյան**) և Որդունի***) նախարարություններու ջնջումով, թեմ ստացան։

Ներսես Պարթև Մեծ Հայրապետին ժամա-

*) Ըստ Մարկուարտի Դանիել Տարոնի եպիսկոպոսն էր և մասնակցած էր Նիկիո ժողովին, որուն իբր նեկկա հիշված է Ակրիտես հայ եպիսկոպոս։ Մարկուարտ կկարծե թե Ակրիտես=վոհրիմ=հայրական մակդիրն է Դանիել եպիսկոպոսի (տես. Հայրենիք ամսագիր, ԺԴ տարի, թ. 3), իսկ Հ. Ներսեսվրդ. Ակինյան համոզված է թե Նիկիո ժողովին մասնակցած է, իբր հովուապետ Հայաստանի, Արիստակես, որուն Հայրապետության ժամանակամիջոցը կհամարե 298-ենն 330 թվականները (տես Արև. 1947 հունիս 30, թ. 8068), մինչ Օրմանյան ասոր Հայրապետության ժամանակամիջոցը նշանակած է 325-ն 333 (Ազգապատում) և Մ. Մաշխասյան՝ 308-ն 31 (էջմիածին, 1944, թ. 1)։ Նիկիո ժողովը գումարվա է 325-ին, որով, ըստ Օրմանյանի, Արիստակեսի Հայրապետությունն առաջ կամ առաջին տարին և ըստ Մաշխասյանի տեսակ ներկա գտնված չի կրնար ըլլա ժողովին մասնակից 318 հայրապետներու կարգի։ Հիշվի հայոց մեծաց Արիստարքոս կամ Արատափիանոսով եպիսկոպոսը, որ Օրմանյան կկարծե մի Արիստակեսն, թեպետ օրինակ օրինակ անունը ա զավագուած (Ազգապատում, էջ 112)։

**) Ըստ Փավստոսի «Մանուսագրքիս ամենայն սահմանքն և գուսանական հանդերձ՝ որ շուրջ զենքս էր, որ կայ ի գրչման գնտոյն Եփրատայոյ։ Նույնպես որ «Եփրատացւոյ» եպիսկոպոս այ կոչված է (Ազգապատում, էջ 99)։

***) Փավստոսի խոսքերն այնպես կհասկցվի թե Բասենի եպիսկոպոսությանն սկզբնավորությունն է։

*) Աղնիք և Մոփք 297-ին անցան Հռոմի և մնացին Հռոմեական տիրապետության տակ մինչև 363։

նակ երբ քրիստոնեական հավատքը բավական ամրապնդված էր Հայաստանի մեջ, նշանակվեցան ամեն կողմ պաշտոնյաներ։

Ներսես փազմացոյց զկարգս պաշտօնէից յամենայն տեղիս իշխանութեանն ի սահմանացն նոցա, և յամենայն գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս և նմանապագ զգուշանայր տեսչութեան իւրոյ և իշխանութեան. որչափ եկաց նա ժամանակս» (Փավստոս Է Իա, էջ 270—271)։ Եվ որչափ կերևի Փավստոսի մեկ խոսքեն, Ներսեսի հատին տարածությունը ամբողջ Հայաստանը չէր ընդգրկեր։ Ան կըսե թե «յայնու ժամանակի սուրբ Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն, զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ի բնէ, առանձին առաջոզի նոցա էր կարգեալ։ Եւ այն գաւառ գլխաւոր գաւառք այս էին, Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք, և ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոքօք»*) (Փավստոս Դ, ԺԴ)։

Դ դարեն միայն 12 եպիսկոպոսություններ կրնային գոյություն ունեցած ըլլալ, եթե Մարկուարտի նկատողությունները առանց նկատի առնելու, Ագաթանգեղոսի խոսքերը առնենք իրենց տառական իմաստով. թեև ան ճշտած չըլլա իր հիշատակած եպիսկոպոսներուն թեմերը կամ պաշտոնները։

Ըստ Հ. Ն. Ակինյանի (Եղիշե վարդապետ և իր պատմութիւնն Հայոց պատերազմի, էջ 622) Դ դարուն պետք է գոյություն ունեցած ըլլային 12 թեմեր**), սակայն իբր ծանոթ կհիշատակե միայն հետևյալ թեմերը***)։

1. Մանավազակերտի (Մանազկերտի) կամ կողմանցն Եփրատական գետույն։
2. Բզնունյաց։
3. Բասենո
4. Բագրևանդա և Արշարունյաց
5. Տայոց
6. Վանանդա
7. Աղձնյաց
8. Կորճուաց

Իսկ Ե դարուն կեսերը, Ղազար Փարպեցիի և Եղիշեի վկայությամբ, անոնց թիվը հասած էր 17-ի միայն Պարսկական Հայաստանի մեջ, առանց հաշվելու Բյուզանդական Հայաստանի թեմերը, որոնց մեջ կգտնվեին Դ դարեն ծանոթ Աղձնյաց և Կորդուաց եպիսկոպոսությունները և ուրիշներ, ինչպես հավանորեն Դ Հայոց (Ծոփք, Հաշտյանք), և Բարձր Հայոց (Կարին, Դերջան, Եկեղյաց և այլն) նահանգներուն մեջ գտնըվող եպիսկոպոսությունները (Հ. Ակինյան, նույն, էջ 621), որոնց անհիշատակ մնալը, իբր ոչ մասնակից Արտաշատի ժողովին, զարմանալի պետք չէ թվի, քանի որ այդ ժամանակամիջոցին Բարձր Հայք, Դ Հայք, Աղձնիք և Կորդիք, այսինքն Հայաստանի արևմտյան և հարավային չորս նահանգները Բյուզանդական տիրապետության տակ կգտնվեին։ Արդարև Արտաշատի ժողովին կմասնակցին հետևյալ 17 եպիսկոպոսները։

1. Հայոց կաթողիկոսը		Այրարատյան	նահանգեն
2. Բագրևանդի	եպիսկոպոս	»	»
3. Բասենի	»	»	»
4. Վանանդի	»	»	»
5. Ամատունյաց	»	»	»
6. Մամիկոնեից	»	Տուրուբերան	»
7. Հարքի=Մանազկերտի	»	»	»
8. Բզնունյաց	»	»	»
9. Տարբերունյաց կամ Արշամունյաց	»	»	»
10. Ապահունյաց	»	»	»
11. Արծրունյաց	»	Վասպուրականի	»
12. Ռշտունյաց	»	»	»
13. Անձևացյաց	»	»	»
14. Մարդպետական	»	»	»
15. Սյունյաց	»	Համանուն	»
16. Մոքսի	»	»	»
17. Տայքի	»	»	»

*) Օրմանյան (Ազգապատում, էջ 255) այս հատվածին համար կուտա մեկնություն մը, որ համոզիչ ըլլալե հեռու է։

**) Անոնց մասին ըստ Հ. Ակինյանի շատ անգոհացուցիչ կերպով կխոսին Փավստոս և անոր ազդեցության տակ Ագաթանգեղոս (Եղիշե վարդապետ, էջ 522)։

***) Հ. Ակինյան, ինչպես կտեսնվի, Տարոնը չէ հիշատակած, մինչ շատ մը փաստեր կան ցույց տվող, թե Տարոն ալ կկազմեր թեմ մը և Նախապատիվ աթոռ մը։

Այս ցուցակին մեջ, ինչպես կտեսնվի, Դ դարեն ծանոթ բոլոր եպիսկոպոսական աթոռները հիշված են բացի Աղձնյաց և Կորդուաց եպիսկոպոսներեն, որոնք չէին կրնար մասնակցիլ ժողովին, բյուզանդական երկիրներեն պարսկական մասը գալով։ Այս ցուցակը ցույց կուտա թե երկրին մեկ մասին՝ Պարսկական Հայաստանի մեջ մեկ դարու ընթացքին եպիսկոպոսական աթոռները որքան շատացած էին։

Նույնպես շատ նշանակելի է, որ հակառակ անոր, որ Պարսկական Հայաստանը կպարունակեր Հայաստանի 15 նահանգներեն միայն 11 հատը, այդ 11 նահանգներեն միայն 6-ին սահմաններուն մեջ գտնվող եպիսկոպոսները կմասնակցեին Արտաշատի ժողովին (449—450-ին) և ավելի նշանակելի է, որ այդ վեց նահանգներեն երեքին՝ Այրարատի, Տուրուբերանի և Վասպուրականի եպիսկոպոսները բազմաթիվ էին, իսկ մյուս երեքին՝ միայն մեկ մեկ հատ։

Ասիկա կարևոր փաստ մըն է, որ ցույց կուտա թե Ե դարուն՝ Այրարատ, Տուրուբերան և Վասպուրական երեք նահանգները իսկապես կկազմեին հայ քրիստոնեության միջնաբերդը, իսկ ցեղագրապես և լեզուով կես-հայացած կարգ մը նահանգներ, ինչպես Կորտուիք, Պարսկահայք, Փայտակարան, Արցախ, Գուգարք կներկայացնեին քրիստոնեապես ալ հետադիմ վիճակ մը։

Արդեն հայ ցեղին քաղաքակրթության օրորանը և իր բոլոր արտահայտիչ ստեղծագործությունները առավելապես Հայկական Բարձրավանդակին միջնաբերդը կազմող չորս նահանգներուն՝ Այրարատի, Տուրուբերանի, Վասպուրականի և Սյունիքի մեջ կեդրոնացած էին։

Ասոնցմե առաջին երեքը Ե, Զ դարերուն կներկայացնեին ավելի սերտ միություն մը, իսկ Սյունիք, որ քաղաքականապես Հայաստանի միությենեն բաժնվելու ձգտումներ ուներ, կրոնապես ալ հայկական կեդրոնական նահանգներուն մեջ միակն էր, որ քրիստոնեության նկատմամբ ալ քիչ մը արտակեդրոն էր, վասնզի, ինչպես, Կորյունի վկայությամբ տեսնվեցավ, այդ նահանգը մինչև Ե դար պետք եղածին պես քրիստոնեացած չէր և ասոր համար էր, որ Մաշտոց իր առաքելական գործունեության դաշտ ընտրած էր Սյունիքը, որուն Վասակ իշխանը, հետո Հայաստանի Մարզպանը,— զինք մեծապես քաջալերած և խրախուսած էր, թե քրիստոնեության արմատացման և թե հայ դպրոցներու հաստատության համար։ Մաշտոց էր, որ Սյունյաց աթոռին վրա հաստատեց իր աշակերտներեն Անանիան, որմե հետո անընդհատ շարունակված է Սյունյաց աթոռը, որ այդ նահանգը շատ ընդարձակ ըլլալուն համար թերևս մինչև վերջը պահեց իր միությունը, անշուշտ ոչ առանց փորձության պահեր ունենալու։ Իսկ Այրարատ, Տուրուբերան և Վասպուրական ընդարձակ կեդրոնական նահանգներուն մեջ հետզհետե եպիսկոպոսարաններու թիվը շատացավ։

Արդարև, Այրարատյան նահանգը, որ ուներ 21 գավառներ, իր մեջ ուներ 9 եպիսկոպոսություն։

1. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը
2. Բագրևանդ
3. Բասեն
4. Վանանդ
5. Արշարունիք
6. Ամատունիք
7. Բագրատունիք
8. Դուին—Բզնի (=Կարբի)

} Դ. դարեն

Ե—Զ »
Է »
Է »

Տուրուբերանի նահանգը, որ ուներ 16 գավառներ, իր մեջ ուներ 9 եպիսկոպոսություն։

1. Հարք	Դ	դարեն
2. Բզնունիք	Դ	»
3. Տարոն	Դ	»
4. Արշամունիք	Զ	»
5. Մարտաղի	Զ	»
6. Ապահունիք	Զ	»
7. Գնունիք	Զ	դարու վերջերեն
8. Խորխորունիք	Զ	» »
9. Ասպակունյաց	Ը	դարեն

Վասպուրականի 35 գավառներեն 9-ը ուներ եպիսկոպոսներ։

1. Ռշտունիք	Ե—Զ	դարեն
2. Անձևացիք	Ե—Զ	»
3. Մարդաստան	Ե—Զ	»
4. Պալունիք	Զ	դարու վերջերեն
5. Մեհունիք—Մեծունիք	Զ	» »
6. Բուժունիք	Զ	» »
7. Ակե	Զ	» »
8. Գողթն	Զ	» »
9. Արտազ	Է	դարեն

Իսկ Սյունյաց նահանգը կմնար անբաժան մեկ եպիսկոպոսություն։ Գալով Բյուզանդական Հայաստանի կցված Բարձր Հայքի, Դ Հայքի, Տայքի, Աղձնիքի, ասոնց մասին դժբախտաբար մեր ծանոթությունները շատ քիչ են։

Հավանորեն Բարձր Հայքի 9 գավառներեն 5-ը (Դարանաղի, Եկեղյաց, Դերջան, Սպեր, Կարին) և Դ. Հայքի 9 գավառներեն 4-ը (Ծոփք, Խորձյանք, Հաշտյանք, Հանձիթ) եպիսկոպոսական աթոռներ ունեցած են։

Իսկ Տայք և Աղձնիք*) ընդհանուր նահանգային եպիսկոպոսներու հիշատակություն ունին միայն և նշանակելի է, որ այս երկու նահանգները խառն բնակչություն ունեին։

Այս դասուն մեջ կարելի է համարել Մոկք և Կորտուք նահանգները ևս, որոնց առանձին եպիսկոպոսները կհիշվին։

Իսկ պարսից տիրապետության տակ գտնվող Պարսկահայք նահանգին 10 գավառներեն միայն երկուքը՝ Հեր և Զարեհավանդ**) ունեին իրենց եպիսկոպոսները։

Արցախ և Ուտի հայ նահանգներ չէին, այլ ավելի աղուանական և կապված առանձին կաթողիկոսության մը. Փայտակարանի անունով ոչ մեկ թեմական հիշատակություն կար, ինչպես նաև Գուգարքի, որ ավելի վիրական էր քան հայկական։

Ասոնք որոշ ցույց կուտան, թե իսկապես հայ քրիստոնեության միջնարերդը եղած են Այրարատյան, Տուրուբերանի, Վասպուրականի և Սյունյաց նահանգները, որոնք ունեցած են կանոնավոր եկեղեցական կազմակերպություն, իրը պահանջ կամ հետևանք հոծ հայության մը, որ կրոնապես ամուր և հաստատուն նկարագիր մը առած էր։ Իսկ Բյուզանդական Հայաստանի մաս կազմող նահանգներեն Բարձր Հայք և Դ Հայք, ունենալով հանդերձ նույնքան հոծ հայություն, և նույնքան ալ թերևս գիտակից քրիստոնյաներ, հունական մոլեռանդության պատճառով դժվարություններու առջև գտնվեին և չունեին հանգիստ և ազատություն իրենց եկեղեցական կազմակերպությունները անարգել վարելու համար։

*) Աղձնիք հավանորեն երբեմն Արծրունիներու կպատկաներ։ Հետևաբար Ե և Զ դարերուն հիշատակված Արծրունյաց եպիսկոպոսները կվերաբերին Աղձնիքի և ոչ թե Վասպուրականի նահանգին։

**) Ոմանք կխորհին թե միայն Հեր ունեցած է իր եպիսկոպոսը և Զ դարուն այս անունով հիշված եպիսկոպոսները կպատկանին Այրարատյան նահանգին Զարեհավանի, ինչ որ շատ հավանական չէ։

Այնպես որ հաջորդ տարիներուն հակառակ անոր, որ հայադավանության ծիրը կընդարձակվի, սակայն անիկա միայն դեպի արևելք և դեպի հարավ կրնա տարածվիլ։ Արդարև կտեսնենք թե Հայաստանի արևելյան ծայրագավառներեն ոմանք և անոնց դրացի գավառներ կունենան հայ եպիսկոպոսներ։ Ժ դարու պատմագիր մը՝ Ուխտանես (Ա. 100) կհիշե ցուցակ մը հայ եպիսկոպոսություններու, որոնք իբր թե Լուսավորիչեն հաստատված էին։ Անշուշտ այս հավաստումը որևէ արժեք չի ներկայացներ, սակայն գոնե իր ժամանակին մեր թաղվոր պատկերը տալու արժեքը ունի*)։

Ըստ Ուխտանեսի այդ 30 եպիսկոպոսություններն էին.—

1. Հայք=Խնուս, Վերին պուլներ
2. Ոստան (Դուին)=Գառնի պաղար
3. Տայք=Օյթի
4. Մարտաղի=Խնուս
5. Արշամունիք=Վարդո, Գոյնուկ
6. Արծրունիք=Վան
7. Սյունիք=Ղարաբաղ
8. Ռշտունիք=Գավաշ, Ոստան
9. Մոկք=Մոկս
10. Ամատունիք=Էջմիածին, Սարդարապատ
11. Բասեն=Հասանկալե
12. Մամիկոնյանք (Տարոն)=Մուշ
13. Բագրևանդ=Ալաշկերտ
14. Խորխոռունիք=Ալճավազ
15. Վանանդ=Կարս
16. Ապահունիք=Մանազկերտ
17. Արշարունիք=Զալտրա, Սհաթլու
18. Գնունիք=Բերկրի
19. Գողթն=Ագուլիս, Օրդուբատ
20. Գարդման=Գրդմանիկ
21. Ակե=Մակու
22. Բուժունիք=Նորատուզ
23. Երուտակք=??
24. Ասորիք=Ուրֆա
25. Անձևացիք=Խոշաբ
26. Պալունիք=Օվալրդ
27. Մեհնունիք=??
28. Էլոյ (Հեր)=Խոյ

*) Զարմանալի է, որ Դրմանյան իր Ազգապատումին մեջ (503) Ուխտանեսի ցուցակին պատմական արժեք տված է, ինչպես Գրիգոր Լուսավորչեն ձեռնադրյալ եպիսկոպոսներու ըստ Ագաթանգեղոսի 400 և ըստ Զենոբի 620 թիվերուն (Ազգապատում. էջ 98—99)։

29. Զարեհավան=Սալմաստ

30. Մյուսասորիք*)=Տիարպեքիր

Նույն Ժ դարում ապրող նշանավոր վարդապետ մը, Սամվել Կամրջաձորեցի, եա իբր թե կազմած ունեը ուրիշ ցուցակ մը, որ ԺԳ դարու մատենագիրներեն Մխիթար Այրիվանեցի մեջ բերած է (Գարեգին Արքեպիս. Հովսեփյան— Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն և երկեր, էջ 20)։

Այս ցուցակն ալ կպարունակե 30-ի տեղ 38 եպիսկոպոսություններ, նույնպես իբր թե Լուսավորչեն հաստատված եպիսկոպոսություններու ցանկն էր.

Ըստ այս ցուցակին «Սուրբն Գրիգոր կարգեաց գանագլուխ եպիսկոպոս ԼԸ (38), ԺԹ (19) յաջմէ և ԺԹ (19) յահեկէ, որք են այսոքիկ»:

Այս աջակողմյան և ձախակողմյան բացատրություններեն որոշ է, որ իրենց նախապատվության կարգը ցույց կուտա։

ԱՋԱԿՈՂՄՅԱՆՔ ԷԻՆ

1. Հարքո
2. Ոստան (Դուին)
3. Տարոն
4. Մարդաղյաց
5. Արշամունյաց
6. Արծրունյաց
7. Սյունյաց
8. Ռշտունյաց
9. Մոկաց
10. Երթարկա(*)
11. Ամատունյաց
12. Գողթան
13. Գարամանաց
14. Ակեռ
15. Բուժանյաց
16. Ռոտակաց
17. Արզնո
18. Ջորրորդ Հայոց
19. Սագաստանի

ՁԱԽԱԿՈՂՄՅԱՆՔ ԷԻՆ

1. Բասենո
2. Մամիկոնյան
3. Բագրևանդա
4. Բզնունյաց
5. Բագրատունյաց
6. Խորխորունյաց
7. Վանանդո
8. Ապահունյաց
9. Արշարունյաց
10. Գնունյաց
11. Ակոռացյաց
12. Պալունյաց
13. Ասորյաց
14. Մեհնունյաց
15. Էլիո (Հեր)
16. Զարեվանդի
17. Եկեղյաց
18. Մյուս Ասորյաց
19. Սպերո

եպիսկոպոսները

Հետաքրքրական է գիտել թե այս երկու ցուցակները բավական իրարու հետ համաձայն են, երկուքն ալ հավասարապես 30 թեմեր ունին, որոնցմե չորսը նախապես բնավ հիշված չեն։

Ասոնք են.

1. Գարդման
2. Երուտակք կամ Օրթուկա
3. Ասորիք (Եդեսիա)
4. Մյուս Ասորիք (Ամիդ)

Ասոնք եթե ոչ բոլորը, գոնե երկուքն, Հայաստանի սահմանին մեջ չեն։

1. Գարդման Աղվանից աշխարհին կամ մեր Ուտի նահանգին մեջ էր։ Արշակ Բ-ի ատեն Աղվանից անցան, սակայն Մուշեղ Սպարապետ գանոնք ետ առավ և Կուրը սահման որոշեց։

387-ին Ուտի և Արցախ գավառները թեև Աղվանից տրվեցան, բայց 462-ին Աղվանից աշխարհին հետ պարսից անցան (Հյուպշման, էջ 109)։ Այս նահանգին գլխավոր քաղաքն էր Պարտավ, ուր էր Աղվանից կաթողիկոսության աթոռը. հետևաբար Գարդմանի աթոռը հայկական չէր կրնար ըլլալ։ Արրահամ կաթողիկոսի 608-ին գումարած ժողովին մասնակից Առանի եպիսկոպոսը եթե Աղձնիքի մեջ նույն անունով հիշված վայրին չի պատկանիր, ապահովաբար նույն է ասոր հետ։ Մանավանդ որ Առան կհիշվի է դարում և Գարդման Ժ դարում։

2. Երուտակք ըստ Ուխտանեսի և Երթուկա ըստ Սամվել Կամրջաձորեցիի, շատ հավանորեն նույնն են, սակայն դժվար է ճշտել

*) Մյուսասորիք Օրմանյան (Ազգապատում, էջ 503) կնույնացնե Մարդպետականի հետ, սակայն կարծեմ ավելի ճիշտ է կարդալ «Մյուս Ասորիք»։ Արդեն Ե դարեն սկսյալ ծանոթ էին «Ասորիք» և «Մյուս Ասորիք» բացատրությունները։ Կորյուն կգրե Մաշտոցի համար, թե «երթեալ հասանէր ի կողմանս Արամի, ի քաղաքս երկուս Ասորւոց, որոց առաջինն Եդեսիա կոչի և երկրորդն՝ Ամիդ անուանի» (էջ 18—19)։ Կորյուն կհաստատե թե Վերին Ասորիք երկու բաժանում ունէր, առաջինին կեդրոնն էր Եդեսիա և երկրորդին՝ Ամիդ։

թե այս աղավաղումը ինչպես եղած է և ի՞նչ է բուն բառը։ Արդյոք Նուաղունիք կամ Նուանրունիք Վասպուրականի գավառն, որուն մեկ տարբեր ընթերցուածն էր Նրիքունիք (տես Հյուպշման. նույն, էջ 218), թե՞ Տուրուբերանի Նոնարքի (հիմա Կարճկան) գավառն է։ Դժվար է վճռաբար ճշտել։

3. Ասորիք, որուն գլխավոր քաղաքն էր Եդեսիա, բնական է, որ առած են հայադավան երկիրներու ծիրին մեջ այս երկու Ժ դարու մատենագիրները, ոչ միայն անոր համար, որ հոն հոծ հայություն մը կար, այլ Աբգարի ավանդությունը շատ խոր արմատ բռնած էր Հայոց մեջ։

4. Մյուս Ասորիք, որուն գլխավոր քաղաքն էր Ամիդ=Տիարպեքիր։ Բայց նկատելով թե Արղն արդեն հիշված է և Ամիթ Աղձնյաց մաս կկազմե, հավանական է, որ մյուս Ասորիք երկու հեղինակներն ալ գործածած են Մերտինի շուրջին համար, որ այլ անվամբ «Միջագետք Հայոց» ծանոթ է։ Գալով այն ութը եպիսկոպոսական աթոռներուն, որոնք միայն Սամվել Կամրջաձորեցի և անկե առնելով Մխիթար Այրիվանեցի կհիշեն, անոնք հետևյալներն են.—

1. Ռոտակը Սասունի հետ կնույնացնե Հ. Ներսես Ակինյան (Եղիշէ վարդապետ և իւր պատմութիւն Հայոց պատերազմի. 1936, էջ 625) և ասոր եպիսկոպոսներուն մասնակցությունը 554-ի Դուինի, 560-ի Հովհաննես Գաբեղյան կաթողիկոսի գումարած ժողովին և 726-ի Մանազկերտի ժողովին կհիշատակե։ Հյուպշման (Հին հայոց տեղւոյ անուննէրը, էջ 92) այս նույնացումը չի հաստատեր և Ռոտակը կդնե Պարսկահայոց մեջ կամ անոր մոտ տեղ մը։

Ղևոնդ, էջ 134 և Հովհ. Կաթողիկոս, էջ 88, 134, 158, իրենց պատմության մեջ չորս անգամ կհիշատակեն այս վայրը, սակայն անոնց գրածեն որոշ հետևություն հանել դժվար է։

Նշանակելի է, որ 726-ին Մանազկերտի ժողովին մեջ կհիշատակվի Ռոտակայ Գևորգ և Սասունի Սարգիս եպիսկոպոսները իբր մասնակից ժողովին. եթե նույն վայրը եղած ըլլար, երկու տարբեր անձեր պիտի չհիշվեին և ոչ ալ երկու տարբեր աթոռ։ Հետևաբար ավելի հավանական է Հյուպշմանի տեսությունը։

2. Աղձն անունը, ինչպես կբացատրե Հյուպշման (Հին հայոց տեղւոյ անուննէրը, էջ 76) արաբական շրջանին նույնանուն քաղաքին կարևորության պատճառով տարածված է ամբողջ նահանգին, այսինքն Աղձնյաց վրա, և արդեն ծանոթ է թե Աղձնյաց նահանգը նույնիսկ Դ դարեն ուներ իր եպիսկոպոսը, որ Ե, Զ, Է, Ը դարուն չէ հիշված, թերևս օտար տիրապետության տակ մնացած ըլլալուն համար։

3. Դ Հայք բացատրությունը հարազատ հայկական չէ, այլ օտարոտի։ Հայերն այս նահանգը կճանչնային Ծոփք անունով և գիտենք թե Լուսավորչի որդին՝ Արիստակես գործած է այս շրջանին մեջ։ Այս շրջանը կանուխեն ենթարկված ըլլալով բյուզանդական տիրապետության, հայ եպիսկոպոսներ բնավ հիշված չեն այդ շրջանեն՝ Դ-են մինչև Ժ դար։ Սամվել Կամրջաձորեցի, հին ավանդության իբր արձագանք, պետք է հիշած ըլլա այս եպիսկոպոսությունը։

4. Սագաստան, ապահովաբար գրչագրական սխալ մըն է։ Սագաստան և Վրկանք երկու իրարու սահմանակից երկիրներ էին Պարսկաստանի հյուսիսակողմը, բարբարոս ժողովուրդներու՝ մասնավորապես սկյութացվոց, քուշանաց և այլ աշխարհներուն սահմանակից։ Վրկանքը այսօրվան Մազանտարանի նահանգն է և Սագաստանն այսօրվան Խորասանը, Աֆղանստանի և Թուրքիստանի*) մեկ մասին հետ։

Հայեր գտնված են Ե դարեն սկսյալ այս նահանգներուն մեջ, քուշանաց դեմ պատերազմելու համար հոն տարված ըլլալով Խոսրով արքայի ատեն (590—627). Սմբատ Բագրատունի Վրկանքի մարզպան եղած է։ Այս առթիվ Սեբեոս կըսե թե «կային յաշխարհին յայնմիկ ազգս գերեալք ի Հայաստան երկրէ և նստուցեալ առ սահմանով անապատին մեծի՝ որ ի Թուրքաստանի և ի Դելհաստանի կողմանե զլեզուն իւրեանց մոռացած և դպրութիւն նուազեալք և կարգ քահանայութեանն պակասեալք»։ (Սեբեոս, էջ 96—97)։

Հովհաննես կաթողիկոս այս տեղեկության վրա կավելցնե, որ Սմբատի հրամանով անոնց եպիսկոպոս ձեռնադրված է Աբել անունով անձ մը (Յովհ., էջ 90—91. հմմտ Ասողիկ Բ 2)։

Հովհաննես կաթողիկոսի խոսքերեն կերևի թե Աբել Սագաստանի առաջին եպիսկոպոսն էր, ձեռնադրված Մովսես Բ կաթողիկոսեն (574—604)։

Հովհաննես կաթողիկոս և Ասողիկ մինչև իրենց ժամանակը, այսինքն Թ և ԺԱ դար անոնց գոյությունը կհաստատեն «կան մինչև ցայսօր վիճակ սրբոյն Գրիգորի» (Ասողիկ Բ 2)։

Իսկ ԺԳ դարուն Կիրակոս Գանձակեցի. պատմելե հետո նախորդ պատմիչներու ըսածները (տես էջ 29), մինչև իր ժամանակ անոնց գոյությունը պահպանված ըլլալը

---

*) Թաչկար քաղաքը կհիշե Եղիշե (էջ 359)։

լրսեր. թեև ունինք այլ և այլ հիշատակութիւններ, ինչպես Պայքալ լիճին հարավակողմը, շինական սահմանագլխի խորհրդային սահմանին մեջ Պիշպեքի նեստորական գերեզմանատան մեջ գտնված 1323 թվականով հայոց Հովան եպիսկոպոսի տապանաքարը, 1375-ին կատալանյան ատլասին վրա Սուլկ-կոլի հարավակողմը նշանակված հայկական Ս. Մատթեոսի վանքը և այլն, որոնք կհաստատեն թե այս շրջաններու մեջ հայեր կային։

Սակայն հակառակ այս բոլորին բնավ հավանական չէ, որ Սամվել Կամրջաձորեցիի ցուցակին մեջ Սագաստան հիշված ըլլա իբր Գրիգոր Լուսավորիչեն կազմված թեմ մը։ Կամրջաձորեցիեն մինչև Մխիթար Այրիվանեցի. անցնող երեք դարերու ընթացքին, իրարմե ընդօրինակողներ հավանորեն ՄԱՐԴԱՍՏԱՆԸ ՍԱԳԱՍՏԱՆԻ վերածած են, հոն իրենց ժամանակ եպիսկոպոս մը գտնվիլեն տպավորված։ Թե ինչո՞ւ ՄԱՐԴԱՍՏԱՆԸ Սագաստանի վերածված ըլլալ կկարծեմ, որոշ է։ Ինչպես հայտնի է ՄԱՐԴԱՍՏԱՆ կհամապատասխանե ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆԻ և այս վերջինը վաղեմի եպիսկոպոսական աթոռ մըն էր, որուն եպիսկոպոսները հիշատակված են իբր մասնակից Աշտիշատի (449—50), Բարգեն կաթողիկոսի (508), Դուինի (554), Հովհ. կաթ. Գաբեշյանի (560), Աբրահամ կաթողիկոսի (568), Դուինի (654), Մանազկերտի (726). Պարտավի (768) ժողովներուն։

Այս եպիսկոպոսությունը անհավանական է, որ մոռցած ըլլա Սամվել Կամրջաձորեցի։ Դժբախտաբար հաջորդ գրիչներ աղավաղած են։

Հ. Ակինյան (Եղիշէ, էջ 627) կըսե թե «Մարդաստանը» նույն է «Մարդպետականի» հետ, որ կոչված է նաև «Սեպհական դնդի» և «Ոստան և Մարդպետականի» թեմ։ Այս նույնության մասին կվկայե Թոմաս Արծրունի (էջ 240). «Ունացին ի համբոյրազան աւանի, Մարդաստան գաւառի ուր եպիսկոպոսական աթոռ Մարդպետականի յայնժամ փոխեալ դնէր ի Նախնեաւան քաղաքն». հետևաբար Մարդաստան=Մարդպետական գավառը հին ատեն ուներ աթոռանիստ Նախիջևանը (տես նույն)։ Հարկ է սրբագրել ուրեմն Սագաստանը Մարդաստանի։

5. Բզնունյաց աթոռը եթե չէ հիշված Ուխտանեսե, պարզ պետք է գրչագրական վրիպանք կամ մոռացություն համարել, վասնզի Բզնունյաց եպիսկոպոսները հիշված են Դ դարուն և հաջորդ դարերուն իբր մասնակից Աշտիշատի (450), Դուինի (654) և Պարտավի (724) ժողովներուն։

6. Բագրատունյաց եպիսկոպոսներ հիշատակված են 654-ին և 726-ին, Դուինի և Պարտավի ժողովներուն իբր մասնակից։ Ինչպես եղած է, որ Ուխտանես զայն չէ հիշած, անմեկնելի է, մանավանդ Ժ դարուն, երբ Բագրատունիք այնքան կարևոր դիրք մը ունեին։

Բագրատունյաց գավառ մը դոյություն չուներ, ուստի դժվար է ճշտել, թե ուր էր այս աթոռին վայրը, որ հավանորեն Շիրակ պիտի ըլլա։

7. Եկեղյաց եպիսկոպոսական աթոռը առաջին անգամ Սամվել Կամրջաձորեցի կհիշատակե։ Եկեղյաց եպիսկոպոսները եթե կային, ինչ որ շատ հավանական է, չեն կրցած մասնակցիլ Պարսկական Հայաստանի մեջ գումարված ժողովներուն և ասոր համար է, որ Տոփաց և Դ Հայոց եպիսկոպոսներուն հետ չեն հիշատակված։

8. Սպեր, Բարձր Հայոց գավառներեն մին, որ Բագրատունյաց օրորանը եղած է։ Սահպես եղած է, որ Ուխտանես զայն չէ հիշած, Ուխտանեսե։ Կգտնվեր Եկեղյաց և Դ Հայոց հետ համանման պայմաններու մեջ։

Ինչպես կտեսնվի, մինչև Ժ դարուն, արդեն Հայաստանյայց եկեղեցին ուներ հայադավանության համար որոշ շրջագիծ մը, որ 38 թեմերու բաժնված էր։

Դ դարեն մինչև Ժ դար մատենագրական տեղեկություններու մեջի հայթայթած տվյալներու համադրությամբ կազմված այս 38 թեմերու պատկերը, որ մերձավորապես նույնը մնացած է հաջորդ դարերուն ալ, շատ քիչ փոփոխություններու ենթարկված ըլլալով, կգծե Ժ դարուն տարածությունը հայադավանության ծիրին և կրնա իբր հաստատուն հիմ մը ծառայել մեզի։

Սակայն ինչպես կտեսնվի, կամ հավանական է, այս 38 թեմերը Հայաստանի մեջ էին և անկե դուրս թեմեր չէին պարունակեր, մինչ նույնպես մատենագրական տվյալներ ունինք, որոնք կհաստատեն թե այս շրջանակեն դուրս հայ Եկեղեցին քարոզչական գործունեություն ունեցած և շրջակա երկիրներ հայադավան դարձնելու աշխատանք կատարած և տեղ տեղ հաջողություններ նշած է։

(Շարունակելի)